Հավելված թիվ 6

Եվրասիական տնտեսական
հանձնաժողովի խորհրդի
2017 թվականի դեկտեմբերի 20-ի
թիվ 107 որոշման

ՑԱՆԿ

ԱՆՁՆԱԿԱՆ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԱՊՐԱՆՔՆԵՐԻՆ ՉԴԱՍՎՈՂ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԵԳՈՐԻԱՆԵՐԻ

1. Թառափազգի ձկնատեսակների ձկնկիթ՝ 250 գ-ից ավելի քանակությամբ:

2. Ձուկ, խեցգետնակերպեր (կենդանի, պաղեցրած, սառեցրած)՝ 5 կգ-ից ավելի քանակությամբ:

3. 18 տարին լրացած անձի կողմից ներմուծվող էթիլ սպիրտ, ոգելից խմիչքներ և գարեջուր՝ 5 լ-ից ավելի ընդհանուր ծավալով:

4. 18 տարին չլրացած անձի կողմից տեղափոխվող էթիլ սպիրտ, ոգելից խմիչքներ և գարեջուր:

5. 18 տարին լրացած անձի կողմից ներմուծվող ծխախոտ և ծխախոտային արտադրատեսակներ՝ 200-ից ավելի սիգարետի, կամ 50 սիգարի (սիգարիլլայի), կամ 250 գ ծխախոտի քանակությամբ, կամ նշված արտադրատեսակները տեսականիով՝ 250 գ-ից ավելի ընդհանուր քաշով:

6. 18 տարին չլրացած անձի կողմից տեղափոխվող ծխախոտ և ծխախոտային արտադրատեսակներ:

7. Եվրասիական տնտեսական միության (այսուհետ՝ Միություն) մաքսային տարածքից արտահանվող այն ապրանքները, որոնց նկատմամբ Միության

անդամ պետության օրենսդրությամբ սահմանվել են արտահանման մաքսատուրքեր (բացառությամբ անձնական օգտագործման տրանսպորտային միջոցի սովորական բաքերում և առանձին տարայում 10 լ-ից ոչ ավելի քանակությամբ գտնվող վառելիքի):

8. Բնական ալմաստներ (բացառությամբ Միության մաքսային տարածքից արտահանվող՝ 75 հազար ԱՄՆ դոլարից ոչ ավելի արժողությամբ ադամանդների):

9. Տրանսպորտային միջոցներ, որոնք ներառված չեն Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2017 թվականի հունիսի 30-ի թիվ 74 որոշմամբ հաստատված՝ անձնական օգտագործման տրանսպորտային միջոցներ հանդիսացող ավտոտրանսպորտային և մոտոտրանսպորտային միջոցների ու ավտոտրանսպորտային և մոտոտրանսպորտային միջոցների կցորդների առանձին տեսակների ցանկում:

10. Ներքին այրման շարժիչներ (բացառությամբ նավակի կախովի շարժիչների):

11. Կենտրոնական ջեռուցման կաթսաներ, որոնք դասակարգվում են ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ 8403 10 ենթադիրքում:

12. ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ 8426-8430, 8433-8442, 8444 00-8449 00 000 0, 8453 -8464, 8465-ից, 8466, 8468, 8474-8480, 8486, 8514, 8530, 8534 00, 8535, 8545, 8548, 9024, 9027, 9030 և 9031 դիրքերում դասակարգվող մեքենաներ, մեխանիզմներ, սարքավորումներ (բացառությամբ սիզամարգերի, զբոսայգիների կամ սպորտային հրապարակների համար նախատեսված հնձիչ մեքենաների, կենցաղային սկավառակային սղոցի):

13. Արևաբուժարաններ արևայրուքի համար:

14. Բժշկական տեխնիկա և սարքավորումներ (բացառությամբ ներարկիչների, ասեղների, կաթետերների, փողակների, նույնանման

գործիքների, արյան ճնշումը, ջերմաստիճանը չափելու համար նախատեսված սարքավորումների, ինչպես նաև բժշկական ցուցումներով օգտագործման համար անհրաժեշտ ապարատուրայի):

15. Բժշկական, վիրաբուժական, ատամնաբուժական կամ անասնաբուժական կահույք (բացառությամբ բժշկական ցուցումներով օգտագործման համար անհրաժեշտ՝ մեխանիկական հարմարանքներով հիվանդանոցային մահճակալների):

16. Վարսավիրական բազկաթոռներ և նույնանման բազկաթոռներ, դրանց մասեր:

17. Ֆոտոլաբորատորիաների համար նախատեսված ապարատուրա և սարքավորումներ, որոնք դասակարգվում են ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ 9010 ապրանքային դիրքում:

18. Ցուցադրության նպատակների համար նախատեսված սարքեր, ապարատուրա և մոդելներ, որոնք դասակարգվում են ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ 9023 00 ապրանքային դիրքում:

19. Մանրադրամով, թղթադրամով, բանկային քարտերով, ժետոններով կամ վճարման նույնանման միջոցներով գործողության մեջ դրվող խաղեր:

20. Ապրանքներ, որոնց նկատմամբ կիրառվում են արտահանման հսկողության միջոցներ՝ Միության անդամ պետության օրենսդրությանը համապատասխան սահմանված դեպքերում և կարգով: